Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի 2010թ. հուլիսի 8-ի թիվ 5 նիստում:
ԵՊՀ ռեկտոր _____ *Ա. Հ. Սիմոնյան*

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՆՉՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Մինչհամալսարանական կրթության վարչությունը Երևանի պետական համալսարանի (այսուհետ ԵՊՀ) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և ԵՊՀ կանոնադրության ու սույն կանոնադրության հիման վրա:

1.2. Մինչհամալսարանական կրթության վարչությունը վերակազմակերպվում կամ լուծարվում է ԵՊՀ ռեկտորի ներկայացմամբ՝ ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

1.3. Սույն կանոնադրության մեջ կարող են փոփոխություններ և լրացումներ կատարվել ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

1.4. Մինչհամալսարանական կրթության վարչությունն ունի կնիք և ձևաթուղթ:

2. Խնդիրներն ու գործառույթները

2.1. Մինչհամալսարանական կրթության վարչության խնդիրներն են.

2.1.1. համակարգել ԵՊՀ ընդունելության և դիմորդների նախապատրաստման ուղղությամբ համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքները,

2.1.2. ապահովել ԵՊՀ-ի և հանրակրթական դպրոցների միջև փոխադարձ կապի ամրապնդումը, դպրոց-բուհ համակարգի շարունակական կրթության սկզբունքը,

2.1.3. իրականացնել առկա և հեռակա համակարգերի դիմորդների հետ շուրջտարվա տեղեկատվական և կազմակերպչական աշխատանքները,

2.1.4. կազմակերպել բազմամակարդակ նախապատրաստական դասընթացները:

2.2. Մինչհամալսարանական կրթության վարչության գործառույթներն են.

2.2.1. ԵՊՀ կրթական ծրագրերի և մասնագիտությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության մատչելիության ապահովման նպատակով ամեն տարի «Դիմորդի ուղեցույց»-ի և ֆակուլտետների մասին պատմող տեսասկավառակների նախապատրաստումը,

2.2.2. Երևանի և մարզերի հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտներին ԵՊՀ կրթական համակարգի ծանոթացումը և մասնագիտական կողմնորոշումը,

2.2.3. ԵՊՀ-ի կառուցվածքում հենակետային վարժարանի (քոլեջի) ստեղծման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքների կազմակերպումը, հանրակրթական ավագ դպրոցներում բազային դասարանների ստեղծումը,

2.2.4. ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով օլիմպիադաների անցկացումը,

2.2.5. ՀՀ-ում գործող ավագ դպրոցների և վարժարանների հետ համատեղ կրթական գործունեություն իրականացնելու վերաբերյալ երկարաժամկետ համաձայնագրերի կնքումը,

2.2.6. ՀՀ մարզերում ԵՊՀ դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով հենակետերի (հավաքագրման մշտական ծառայություններ) ստեղծումը,

2.2.7. երկարաժամկետ նախապատրաստական դասընթացներում դիմորդների գործերի ընդունման և ուսումնական գործընթացի կազմակերպումը,

2.2.8. բուհական ընդունելության քննություններից առաջ արագացված նախապատրաստական դասընթացների կազմակերպումը,

2.2.9. հեռակա (հեռահար) ուսուցմամբ նախապատրաստական դասընթացների մշակումը,

2.2.10. դիմորդների համար բուհական ընդունելության քննություններից առաջ փորձնական քննությունների կազմակերպումը:

3. Կառուցվածքը և կառավարումը

3.1. Մինչհամալսարանական կրթության վարչության աշխատանքները համակարգում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը:

3.2. Մինչհամալսարանական կրթության վարչությունը կազմված է դիմորդների հետ տարվող աշխատանքների և նախապատրաստական դասընթացների բաժիններից:

3.3. Մինչհամալսարանական կրթության վարչության հաստիքացուցակը հաստատում է, դրա մեջ փոփոխություններ է կատարում ԵՊՀ ռեկտորը:

3.4. Մինչհամալսարանական կրթության վարչությունը գլխավորում է վարչության պետը, որին նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ռեկտորը:

3.5. Մինչհամալսարանական կրթության վարչության պետը իրականացնում է հետևյալ գործառույթները.

3.5.1. վարչության կառուցվածքային ստորաբաժանումների անմիջական ղեկավարում,

3.5.2. գիտական խորհրդում և ռեկտորատում առկա և հեռակա ուսուցմամբ ընդունելության վերաբերյալ հարցերի նախապատրաստում,

3.5.3. հանրակրթական դպրոցների հետ համագործակցության երկարաժամկետ ծրագրի մշակում:

3.6. Մինչհամալսարանական կրթության վարչության պետը պատասխանատվություն է կրում վարչության աշխատանքների որակի, խնդիրների և գործառույթների պատշաճ կատարման համար: